բոնութեամբ ի Պալատէն վայր իջուցեալ։ Երրորդ աւիզն. ատմ օղլի ասայտ փաշան ի հալէպ նստեալ հասարակ քաղաքացւոց մեծ բարութիւնս արարեալ. և յոլով սովորական զրկողութեան տուգանսն բարձեալ և հացին լիտրն 6 ստակ արարեալ. և պարտքն որ կայր ի վերայ քրիստոնէից սիրով ի վերայ թարգմաներուն եդեալ. և արժանի գովութեան այլ իրս գործեալ։ Իսկ ի Հռոմ քաղաքի այսմիկ ամսոյ զանազան անձինք անկարծակի մահուամբ մեռեալք ի մէջ որոց կարտինալ միլոն։...

Նուաստ ծառայ
Յովսէփ եպիսկոպոս [Եդեսիայ
Ստեփանեան]

Ցամի Տեառն 1757 Նոյեմբերի 26.ին
ի Հռոմ ի սրբուհի մարիամ եգիպտացի

ՄԸ.

Թէ ո՛րքան մեծ է շահեկանութիւնը հետևեալ վաւերաթղթիս՝ ընթերցողն ինքնին պիտի ըմբռնէ։ Գլխաւոր նիւթն է Երուսաղեմի Սուրբ Յարութեան Տաճարի ժամանակակից անցքերը՝ որոնք Զամչեանի Պատմութեան մէջ չեն յիշուած, թերևս աւելի հետագայ ժամանակի պատկանելնուն համար, որովհետև նամակս անթուական էր ու կը գտնուէր մեր դիւանի 1757–ի թղթերուն մէջ, թերևս նոյն իսկ անդրադարձնելու՝ թէ սոյն տարուոյն վերաբերեալ գիր մ'է։

Ցոյժ պատկան և անկ համարիմ աստէն ընդ քարտիզիս այսմիկ իմում ճառել զանցսն՝ որք անցին յերուսաղէմ յաւուրս իմ։ Զի ըստ սովորութեան իւրաքանչիւր ամի գայ հասանի ի սուրբ երկիրն կոմս դամասկոսի, այսինքն փաշայն, և պահանջէ զտարեկան տուրսն յերից ազգաց։ Ի հայոց առնու ոսկի 3000, ի յունաց 4000 և ի լատինացւոց 5000։ Յետ այսորիկ պազիրկեան պաշի փաշային՝ որ էր ի հրէից անտի՝ անկեալ ի մահիճս խօթութեամբ մեծաւ ջերմախտանայ։ Եւ պատրիարգն յունաց և լատինացւոց ուղարկեն զթարգմանս իւրեանց հանդերձ պարգևօք հարցանել զորպիսութենէն։ Իսկ հայք ոչ։ Եւ ոչ յետ բազում աւուրց կինն այնմիկ հրէի խնդրէ շնորհս յառաջնորդէն հայոց, կարել մտանել ի պարտէզ ինչ առնել աղօթս ըստ սովորութեան իւրում։ Զայս պարտէզս գնեալ էր գրիգոր վարդապետն. և չէր պարտէզ, այլ բնակութիւն, յորում գտանիւր ժողովարան հրէից։ Եւ յետ գնելոյ զայն՝ քայքայեալ ի պարտէզ դարձոյց։ Եւ իբրև չընկալաւ զխնդիրն՝ խրոխտացեալ գնայ վաղվաղ. և պատմէ առն իւրում։ Իսկ այրն քինախնդիր և նենգոտ մատուցեալ առ փաշայն իւր՝ խօսի ընդ նմա և ասէ. եթէ ունիմ շնորհս առաջի քոյ տէր իմ, լո՛ւր ինձ. և նա ասէ, ցի՞նչ։ Ասէ հրէայն. կամի՞ս շահել զդրամ բազում յոյժ. կոչեա զպատրիարգունս յունաց և հայոց, և ասա՛ ցնոսա. թէ կամիմ ի վաղիւն յետ երեկոյեան ժամու գալ, և գերեզմանաւն յիսուսի նստիլ։ Ի համառօտի ասացից. կոչէ փաշայն զպատրիարգունս՝ և խրոխտիւ խօսի ընդ նոսա։ Նոքա զարհուրեալ ասեն. տէ՛ր իմ, չէ՛ այդ բնաւ լեալ յազգի մերում, և ոչ յազգի ձերում, զի տեղին այն աղբանոց կոչի. և դու զի՞նչդ կարիցես գալ, և զաղօթս քո մատուցանել։ Ցայ պատասխանի փաշայն. լուայ քաջ, թէ լոյս ելանէ ի գերեզմանէ յիսուսի. ես եկից և առ դրան եդից զաթոռ իմ, և վայելեցից զդոյզն ինչ ի լուսոյ յիսուսի։ Եւ սոքին յուզեալք, չգիտելով տալ պատասխանի, պատճառէին ասելով, թէ ոչ անկ լինի տէրութեան քում առընթեր լինիլ անդէն, զի մեք զհրոյ տօն կատարեմք. և այլ ինչ չունիմք։ Եւ փաշայն առ ի չինել զկամս նոցա և չգնալ ի գերեզման խնդրէ քսակ 1000։ Եւ զի՞նչ երկարեցից՝ յետ անթիւ արտասուաց և լացից, հազիւ կարեն հաճել զփաշայն 100 քսակաւ։ Այն սա այսպէս անցանէ։ Եւ յետ այնորիկ ազդ առնէ փաշայն պատրիարգաց զի պատրաստեսցեն տեղի ի յեկեղեցւոջ սուրբ աստուածածնա Գերեզմանին. զի գնացեալ վճարեսցէ անդէն։ Իսկ նոքա զառաջինն չփութութեամբ յուզեալք՝ զայլ և զայլ իրս պատճառէին. և հազիւ դադարեցուցին զնա՝ տալով այլևս 50 քսակ։ Իսկ պատճառսն թշնամութեան լատինացւոց ընդ յունաց իսկա-